ԱՐԱՔԵԼՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թիւ 413
Ապրիլ 5, 1991

Արժանաշնորհ
Տ. Բարի Քհնյ. Մէթճեան
Հովիւ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուինվուտ.

Սիրելի Տէր Բարի,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 8, 1991 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 24, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին վեց անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Վոն Հոփլամազեան
Անահիտ Մկրեան
Մայքըլ Աղճեան
Մարկարէթ Աշրքեան
Չարլզ Քիթապճեան
Փոլ Միհրանեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է երկպատից ցանկի մը վրայէն գաղտնի քուէարկութեամբ ըլլայ։ Իսկ համայնքիդ տեղեկագիրներուն մէջէն կը պակսէր Ծխական Խորհուրդի տարեկան տեղեկագիրը։

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը։ Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ